ՀՏԴ 14(479.243) Քաղաքագիտություն

Շահեն Աբրահամյան,
փ.գ.թ. դոցենտ, պրոֆեսոր
ԱրՊՀ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԼՂՀ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՇՈՒՐՋ

Հեղինակի կարծիքով անկախ պետականակերտման գործընթացում ԼՂՀ հասարակության սոցիոմշակութային տրանսֆորմացիան կատարվել է առանձնահատուկ և ավելի բարդ պայմաններում, որը կապված էր ազգային զարթոնքի, պետականության նոր ձևի ընտրության և ազգայնական գաղափարախոսության ակտիվացման հետ: Ընդգծվում է՝ վերևից պարտադրված տնտեսական համակարգի արմատական վերակառուցման նեգատիվ ազդեցությունը սոցիալականացման գործընթացի վրա:

Բանալի բառեր՝ *սոցիոմշակութային, ելակետային, սոցիալական շերտավորում, համակարգ, էլիտար խավ*

Шаген Абрамян,
кандидат философских наук, доцент, профессор,
кафедра фолософии и политологии АрГУ

РАЗМЫШЛЕНИЯ ПО ПОВОДУ ПРОЦЕССА СОЦИАЛИАЦИИ В НКР

По мнению автора в процессе создания независимой государственности в НКР трансформация социокультурного общества произошла по-особенному и в сложных условиях, что связано с национальным пробуждением, выбором нового вида государственности и с активизацией национальной идеологии. Подчеркивается отрицательное воздействие на процесс социализации, навязанной сверху во время коренной реконструкции экономической системы.

Ключевые слова*: социокультурный, отправная точка, социальная дифференцация, система, элита*

Shahen Abrahamyan,
Ph.D, .ASU, Lecturer, Department of Philosophy and Political Science

CONTEMPLATIONS ON THE PROCESS OF SOCIALIZATION IN THE NKR

According to the author in the process of establishing an independent state in the NKR socio-cultural transformation of society was in a special way and in difficult conditions, which is associated with the national awakening, a choice of a new kind of state, and with the activation of a national ideology.

Keywords*: socio-cultural, the starting point, social differentiation, the system, the elite*

Հասարակության սոցիալականացման գործընթացը ԽՍՀՄ տարածքում ձևավորված նորանկախ պետություններում հանդիսանում է քաղաքագիտության ուսումնասիրության հրատապ հիմնահարցերից մեկը: Բոլոր դեպքերում հասարակական իրավաքաղաքական կյանքի արմատական վերակառուցումը անհրաժեշտություն է դարձնում ելակետային վերափոխումները հասարակության սոցիալական կառուցվածքում: Հեղափոխական բնույթի բոլոր շարժումների ավարտից հետո որպես կանոն սոցիալական տրանսֆորմացիայի է ենթարկվում հասարակությունը: Հասարակության մասնիկը հանդիսացող յուրաքանչյուր անհատ հաղորդակցվում է տնտեսական զարգացման նոր համակարգի, նոր ռազմավարության, քաղաքական մշակույթի նոր արժեքների հետ և այսքանից ելնելով, որոշում է իր տեղն ու դիրքը սահմանող նոր գործառույթների համակարգում: Այս տեսանկյունով կարող ենք ասել, որ ԼՂՀ հասարակության սոցիալականացման գործընթացը խորհրդային համայնվարական համակարգի փլուզումից և անկախության հռչակումից հետո ընթացել է երկու փուլերով: Առաջին փուլի բնորոշման համար որպես ելակետ կարելի է համարել խորհրդային հասարակարգում հիմնավորված <<գործարանը՝ բանվորին, հողը՝ գյուղացուն>> կարգախոսը, որը իր վաղեմի ազդեցությունը իսպառ կորցրել էր դեռևս անցյալ դարի 70-ական թվականներին, և բնականաբար նոր պայմաններում անհարժեշտություն դարձավ սոցիալական հարաբերությունների նոր ուղենիշի ընտրությանը: Այդպիսի ուղենիշ դարձավ Արևմտյան տնտեսական ու քաղաքական արժեքների որդեգրումը՝ իբրև իդեալական հասարակական հարաբերությունների համակարգ: Տնտեսական կյանքում այդ ուղենիշը նշանակում էր շուկայական հարաբերությունների արմատավորում արտադրության և առևտրի ասպարեզում: Իսկ քանի որ ԼՂԻՄ-ի տնտեսական կյանքում գերակա դերը պատկանում էր գյուղական կոլեկտիվ տնտեսություններին, բարեփոխումների հիմնախնդիր դարձավ նախկին կոլեկտիվ տնտեսությունների լուծարման և Արևմուտքի օրինակով ֆերմերային տնտեսությունների կառուցման անհրաժեշտությունը: Մինչդեռ տասնյակ տարիներով համայնավարական տնտեսական համակարգում ապրած գյուղացին գաղափար չուներ ոչ շուկայական հարաբերությունների, ոչ էլ ֆերմերային տնտեսությունների մասին: Ուստի ռազմավարական այսպիսի ձեռնարկումների արդյունքում իրականություն դարձան կոլեկտիվ տնտեսությունների լուծարումը և գյուղական բնակչությանը բացարձակ ազատության շնորհումը: Այսինքն, տնտեսական և սոցիալական բարեփոխումների

հետևանքը եղավ այն, որ գյուղացու համար ստեղծվեց անձնական կյանքի կառուցման անհատական կամքով ընտրված ռազմավաչրական ուղի: Գյուղական հասարակության ացագ խումբը վերադառնալով հայրերի ու պապերի հողի և անասունի հետ ունեցած հարաբերությունների կենսառճին, իր զբաղվածությունը, ձեռքի ուժի օգտագործումով, որոնեց տնամերձ հողամասում և տնային սահմանափակ տնտեսության ստեղծման մեջ: Մի խոսքով, ԼՂՀ-ում ազատությունը հռչակվեց որպես սոցիալական կացության եղանակ: Բայց չմոռանանք, որ տասնյակ տարիներով ԼՂՀ-ի հասարակությունը իր բոլոր տեսակի հարաբերություններով, անգամ ընտանեկան հարաբերություններով գտնվում էր պետական կառույցների հսկողության ներքո: Ուստի շնորհված համարյա բացարձակ ազատությունը չէր կարող չունենալ իր ստվերոտ կողմերը:

ԼՂՀ հասարակության սոցիալականցման գործընթացի երկրորդ փուլը կարելի է անվանել հասարակական խմբերի և անհատի տնտեսական ու սոցիալ-քաղաքական կյանքում սկսված ակտիվացման փուլ: Այն սկսվում է անցյալ դարի 90-ականների երկրորդ կեսերից: Ի դեպ, նպատակահարմար ենք համարում այստեղ ընդգծել, որ անհատի սոցիալականացումը կատարվում է քաղաքական ու հասարակական կառույցների՝ պետության, դպրոցի, կուսակցությունների, հասարակական բազմաբնույթ կազմակերպությունների, միությունների, հավատի միջոցով: Անհատի սոցիալականացման գործընթացին ակտիվորեն մասնակցում են նաև երկրի լիդերները, գիտության և մշակույթի ճանաչված գործիչները, հավատը, լրատվության միջոցները և գաղափարախոսությունը: Սոցիալական կառուցվածքի բաղադրամասերի կազմավորման գործում կարևորագույն դեր են կատարում քաղաքական ռեժիմները, մարդկանց ապրելակերպը, նյութական բարիքների և աշխատանքի արժեքների արդարացի բաշխումը: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Լեռնային Ղարաբաղի հասարակության սոցիոմշակութային տրանսֆորմացիան կատարվել է առանձնահատուկ և սովորականից ավելի բարդ պայմաններում, որը կապված էր ազգային զարթոնքի, պետականության նոր ձևի ընտրության և ազգայնական գաղափարախոսության ակտիվացման հետ: Ղարաբաղցիների կողմից Մայր հայրենիքի հետ վերամիավորման և պատմական արդարության վերահաստատման պահանջը ոչ միայն զուտ ազգայնական բնույթ ուներ, այլ նաև բողոքի արտահայտություն էր խորհրդային տոտալիտար ռեժիմի դեմ: Հետևաբար, խորհրդային տնտեսական համակարգի փլուզման հետ մեկտեղ ղարաբաղցիները հրաժարվեցին նաև խորհրդային սոցիոմշակութային կառուցվածքից: Հասարակագիտության արխիվին հանձնվեց բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության շահերի միասնության մասին հորինված սոցիոմշակութային պատրանքը:

Երկրի ներքին կայունության, հասարակության միասնության ու համերաշխության պահպանման համար անհրաժեշտություն դարձավ սոցիոմշակութային նոր մոդելի առաջադրումը: Նոր մոդելի հիմքում դրվեցին բարենպաստ ազգայնական գաղափարախոսությունն ու քրիստոնեական բարոյախոսությունը: Հոգևոր այս գործոնների ազդեցության ներքո ձևավորվեցին սոցիալական ու քաղաքական համակարգերը: Կազմավորվեցին պետական կառույցները, կյանքի կոչվեց իշխանական մարմինների ընտրական համակարգը, հիմնադրվեցին քաղաքական կուսակցություններ և բազում հասարակական կազմակերպություններ: Հասարակությունը ընտրեց սոցիալական զարգացման ժողովրդավարական ուղին, հետևաբար նաև աշխատանքի արժեքի գնահատման և բարիքների արդարացի բաշխման եղանակը: Տնտեսակարգի արմատական վերակառուցման մեջ առանցքային նշանակություն ստացան սեփականաշնորհիման, շարժական և անշարժ գույքերի հավասարակշռված վաճառքի, կառավարման ասպարեզում մասնագետ ու գործիմաց անհատների ընտրության հիմնահարցերը: Իսկ ինչպիսի ընթացքավորում ունեցավ այս հիմնահարցերի լուծումը: Չենք կարող մեր կարծիքը փաթաթել ընթերցողին, բայց ճշմարտության աչքերին նայելով, պետք է ասենք, որ հենց այս հիմնահարցերի լուծման մեջ գերակայող դեր կատարեց չարաբաստիկ անձնական շահը: Երկրում եղած կապիտալն ու ռեսուրսները հայտնվեցին փոքր խումբ անհատների ձեռքում: Մի քանի տարիների ընթացքում ձևավորվեցին սեփականատեր հարուստների փոքրաթիվ և աղքատների ստվար խավեր: Ինչ վերաբերում է քաղաքական էլիտար խմբի ձևավորմանը, ապա այստեղ 90-ականների երկրորդ կեսերին հիմնավորվեցին մի շարք սկզբունքներ, այսինքն, թե ով ում հետ է սովորել դպրոցում կամ բուհում, ով ում զավակն է, ով ում հետ է հարևան, ում հետ է ընկերություն արել պատանեկության տարիներին և այլն: Այս սկզբունքներով է շատ դեպքում կազմավորվել քաղաքական էլիտար խմբի վերելակը, իսկ բանականությունը մնացել է ստվերի տակ:

Վերը նշված թերացումները զգալի դեր են կատարել հետխորհրդային Լեռնային Ղարաբաղի հասարակության սոցիալական կառուցվածքի դեֆորմացիայի խորացման գործում: Գևորգ Պողոսյանը ընդգծում է, որ հետխորհրդային հասարակությունները խցանվել են երկու պատմական համակարգերի միջև ընկած սոցիալ քաղաքական տարածքում:[1]

ԼՂՀ հասարակության սոցիալականացման գործընթացը կարելի է համարել անկանխատեսելի սոցիալական հանրույթների ձևավորման չկայացած համակարգ, որտեղ ներկա պայմաններում ստույգ կերպով սահմանազատվում են հասարակայնորեն կազմավորման երկու հիմնական բևեռներ: Դրանք հարաբերականորեն կարելի է անվանել հարուստների և աղքատների խմբեր: Չնայած կուսակցությունների ծրագրերում, պետական այրերի հրապարակային ելույթներում հաճախակի են հնչում փոքր և միջին բիզնեսի զարգացման, հասարակական միջին խավի ձևավորման մասին խնդիրները, այնուհանդերձ կարծում ենք <<միջին խավ>> կոչվող հանրույթը ԼՂՀ-ում հաստատուն կեցվածք չունի: Սակայն այսպիսի եզրահանգումով չի նսեմանում ԼՂՀ իշխանությունների ներքին քաղաքականության սոցիալական նպատակաուղղվածության ռազմավարությունը: Վերջին տարիներին ակնառու փոփոխություններ են կատարվել մայրուղիների և միջգյուղական ճանապարհների բարեկարգման, դպրոցաշինության, սակավակարող ընտանիքների աջակցության, մայրաքաղաք Ստեփանակերտի և շատ

[1] Տես.Գևորգ Պողոսյան. Հայ հասարակությունը 21-րդ դարասկզբին.Երևան,2006թ.,էջ 201

գյուղերի ջրատար ցանցի բարեկարգման, ներքին անվտանգության ապահովման: Հաճախ այնպիսի կարծիք է ստեղծվում, որ թվում է, թե մարդկանց մի մասի մոտ ձևավորվում են նաև խնամառուական տրամադրություններ:

Այսպիսով, ներկա հոդվածում փորձեցինք անձնական տեսանկյունով ներկայացնել ԼՂՀ հասարակության սոցիալականացման գործընթացի որոշ հատկանիշները, իրենց դրական և ստվերոտ կողմերով հանդերձ: 20-րդ դարի բրիտանական հանրաճանաչ քաղաքագետ Էնդրյու Հեյվուդը ընդգծել է, որ սոցիալական կառուցվածքով է բնորոշվում երկրի քաղաքական կարգը: Սոցիալական դիֆերենցացումը և հասարակության ներսում գոյացող հակասությունները վերջին հաշվով հասցնում են ռեֆորմների կամ հեղափոխությունների:[1]

ԼՂՀ-ում ներկա պայմաններում միանշանակ բացառվում են սոցիալական հակամարտ բախումների և հասարակության ու իշխանության օտարման նախադրյալները: Հասարակությունը վստահում և ընդունում է իշխանության լեգիտիմությունը: Պարզապես յուրաքանչյուր անհատ, յուրաքանչյուր ընտանիք կառուցում է իր ապրելակերպի ու սոցիոմշակութային կենսառճը՝ կարևորությունը հատկացնելով ընդհանուրի նվաճած անկախության արժեքավորմանն ու հասարակության ներքին էթնիկական միասնության պահպանմանը:

[1] См. Эндрю Хейвуд.Политология.Изд.Юнити,М.2005г.,стр.240